

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՕՐՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԳԵՐԱՇՆՈՐՎ
Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ՝
ՔԱՆԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ
ՔԱՌԱՍՆԱՍՅԱԿԻ ԱՌԹԻՎ**

**ԳԻՐ ՆԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՆԱՏԱՆԱՅ
ԱՌ ՄԻՐԵՅԵԱԿ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՎԱՍՏԱԿԵԱԿ ՍՊԱՍԱՒՈՐՆ
ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԵՐ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ
ԳԵՐԱՇՆՈՐՎ Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՂԻՄԿՈՂՈՍ ՂԱՐԻՊԵԱՆ,
ՈՐ Ի ՄԱՆ ՓԱՌԻՕ, ԲՐԱԶՄԻԻԱ**

Սիրելի Սրբազան, ուրախությամբ փեղեկացանք, որ Տիրախնամ Ձեր թեմի Թեմական խորհրդի հաւաքատուր ժողովրդի կողմից կազմակերպուում է Ձերոյ Սրբազնութեանը նուիրում մեծարման հանդիսութիւն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութեան քառասնամեայ յոբելեանի կապակցութեամբ: Այս առիթով համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Նայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհատրանքները:

Սիրելի Սրբազան, Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ Դուք, Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Ժառանգատրաց Վարժարանի յարկի ներքոյ ամբողջացնելով հոգեւոր Ձեր ուսումնառութիւնը, ծառայութեան ուխտ կնքեցիք Աստուծոյ Սուրբ Սեղանի առջև՝ սրանձնելով կուսակրօն հոգեւորականի պարասխանաբար առաքելութիւնը Քրիստոսասէր մեր ժողովրդի կեանքում: Երիտասարդ հասակից Դուք հովուական առաքելութեան կոչուեցիք Նարապետական Ամերիկայի հայոց թեմերում՝ ժրջան ու քաջեռանդ ծառայութեամբ հոգեւոր սնունդ ջամբելով մեր ժողովրդի հաւաքատուր զաւակներին եւ յարկապէս իբրեւ Կորդոբայի հայոց հոգեւոր հովիւ անելի քան փասը փարիներ Ձեր աւանդը բերեցիք հայ համայնքի զօրացմանն ու ազգային-եկեղեցական կեանքի պայծառացմանը:

Աստուծոյ կամօք Ձեր ծառայութիւնն առաւել եւս արդիւնատուր ու բեղուն եղաւ Բրազիլիայի հայոց թեմում, ուր պաշտօնավարեցիք նախ որպէս Նայրապետական Պատուիրակի Փոխանորդ եւ ապա՝ նորակազմ թեմի առաջին առաջնորդ: Ընդառաջ Թեմական խորհրդի եւ հաւաքատուր բրազիլահայութեան խնդրանքին, երջանկայիշաբարակ Վազգէն Ա. Ամենայն Նայոց Նայրապետի ձեռամբ օծուեցիք եպիսկոպոս, եւ Ձեզ վստահուեց թեմական կառոյցների կազմակերպումը եւ հեռատու մայրցամաքում բնակութիւն հաստատարած հայորդիների հաւաքն ու ազգային ոգին ամրացնելու, նրանց հոգիներում մեր սրբազան ժառանգութեան եւ մայրենի լեզուի պահպանութեան հանդէպ սերն ու նախանձախնդրութիւնը զօրացնելու

սրբազան առաքելությունը: Ուրախ ենք հաստատելու, որ շուրջ քսան տարիների առաջնորդական ծառայության վաստակով Դուք արժանացել էք հաստատոր Ձեր հօտի սիրուն ու յարգանքին:

Սիրելի Սրբազան, Ձեր յոթելեանի աղիթով Նայրապետական Օրհնության այսու Գրով Մեր բարձր գնահատանքն ենք յղում Ձեզ՝ հոգևոր և ազգային առաքելության իրականացման գործում փաստամեակների Ձեր բազմարդին ծառայության և Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնի նկատմամբ մշտապես դրսևորած սիրոյ ու հաւարարմութեան համար: Ի խորոց սրտի աղօթք ենք վերառաքում առ Աստուած՝ հայցելով, որ Տէրը օգնական լինի և գորացնի Ձեզ Ձեր կոչման մէջ և պարզելի երջանկութեամբ ու ազգաշահ ձեռքբերումներով լեցուն քաջառողջ կեանքի տարիներ՝ ի պայծառութիւն Բրազիլիայի հայոց Տիրախնամ թեմի և Առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու:

«Այնպէս լուսատրեւոցէ լոյս Ձեր առաջի մարդկան, որպէսզի տեսցեն զգործս Ձեր բարիս, և փառատրեւոցն զՆայրն Ձեր որ յերկինս է» (Մատթ. Ե. 16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՅ

Տուալ Գիրս Օրհնութեան ի 21-ն Օգոստոսի
 ի թուին Տեառն 2003 և ի թուին հայոց ՌՆԾԲ
 ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
 քնդ համարաւ 362